ՄԱՔՍԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ
ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՆԱՆՅԱՆ

ՀՀ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Տարաբնակեցման քաղաքականության ճիշտ և գիտականորեն հիմնավորված իրականացման համար պետք է կատարել հեռանկարային տարաբնակեցման ճիշտ կանխատեսումներ: Ընդ որում, տարաբնակեցման կանխատեսումները պետք է բխեն հասարակության բոլոր ոլորտների զարգացման միտումներից՝ դրանք համադրելով տնտեսական, սոցիալական,ժողովրդագրական, գիտատեխնիկական կանխատեսումների հետ: Տարաբնակեցման կանխատեսման ժամանակ պետք է հաշվի առնել տարաբնակեցման հետևյալ հատկանիշները՝ ա/ համախմբող և համալիրային բնույթը, բ/ իներցիոն բնույթը, գ/ անորոշությունը:

Տնտեսության զարգացումը, ժողովրդագրական փոփոխությունները, բնակչության պահանջմունքների աճը, գիտատեխնիկական առաջընթացը շատ անգամ ավելի արագ են ընթանում քան տարաբնակեցման փոփոխությունները: Ընդ որում տարաբնակեցումը միշտ չէ որ միանգամից է արձագանքում վերը նշված փոփոխություններին:

Հետևաբար, տարաբնակեցման կանխատեսման ժամանակ, բացի հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և կառուցվածքային տեղաշարժերից, պետք է ելնել տարաբնակեցման՝ անկախ, ինքնակարգավորվող և ինքնազարգացող համակարգ լինելու հանգամանքից: Դա հնարավորություն է տալիս բացահայտելու զարգացման և փոփոխության մեխանիզմներն ու միտումները և անելու ճիշտ կանխատեսումներ: Այսինքն էքստրապոլյացիոն մեթոդը խիստ կարևորվում է տարաբնակեցման կանխատեսման ժամանակ, երբ որոշակի ժամանակահատվածում նկատվող տեղաշարժերը և միտումները տեղափոխում ենք հեռանկար, ենթադրելով որ մոտակա ժամանակաշրջանում

դրանք էական փոփոխություններ չեն կրելու :

Տարաբնակեցման կանխատեսման ժամանակ տարբեր հեղինակների կողմից օգտագործվում են տարբեր մաթեմատիկական մեթոդներ: Դրանցից առավել տարածվածը *Մարկովի շղթաների* մեթոդն է (1) :

Մարկովյան շղթաներ անվանում են այնպիսի պրոցեսները, որոնցում յուրաքանչյուր տվյալ իրադարձությունը կախված է այն իրադարձությունից, որն անմիջապես նախորդել է նրան: Կամ, այլ կերպ ասած, տվյալ փորձի ելքը կախված է անմիջականորեն նրան նախորդող փորձի ելքից և միայն նրանից:

Մոդելի կառուցման նպատակն էր կանխատեսել ՀՀ տարաբնակեցման կառուցվածքը հետևյալ կտրվածքներով. նախ, ամբողջ հանրապետության համար կանխատեսել տարաբնակեցման տարբեր մակարդակներում՝ 1/գյուղական բնակավայրեր, 2/տեղական կենտրոններ և այլ քաղաքներ, 3/մարզկենտրոններ և 4/մայրաքաղաք՝ Երևան, բնակչության բաշխման համամասնությունները: Երկրորդ ենթախնդիրը ոչ թե ամբողջ հանրապետության, այլ նրա առանձին տարաբնակեցման համակարգերում եռաստիճան կտրվածքով՝ կենտրոն (հիմնականում մարզկենտրոններ և ք. Երևան), այլ քաղաքներ և գյուղական բնակավայրեր, բնակչության բաշխման համամասնությունների որոշումն է:

Մեր կողմից այդ մեթոդը օգտագործվել է ՀՀ տարաբնակեցման կանխատեսման համար:Առաջիկա տասը տարիների համար կանխատեսվել են տարաբնակեցման համակարգի և առանձին ՏՏՀ-երի կառուսվածքը և զարգացման միտումները:

Ինչ խոսք, ՀՀ ներկա սոցիալ-տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական անկայուն ժամանակաշրջանում կանխատեսման փորձերը բավական լուրջ և պատասխանատու քայլ են, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ բացակայում են ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ուղիներն ու երկարաժամկետ ծրագրերը: Հասկանալի է, որ կանխատեսման համար օգտագործվող մաթեմատիկական ապարատում հնարավոր չէ հաշվի առնել բոլոր գործոններն ու պայմանները:

Այնուամենայնիվ, մեր կողմից օգտագործված կանխատեսման մեթոդի փորձարկումը նախորդ տասնամյակի կտրվածքով հնարավորություն է տալիս պնդելու, որ բավականին իրատեսական են ստացած արդյունքները:

Բացի այդ, որոշակի հիմքեր և նախադրյալներ կան պնդելու, որ առաջիկա տասնամյակը քաղաքական, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական առումով ավելի կայուն ժամանակաշրջան է լինելու, քան նախորդ տասնամյակը /1988-1998/:

Տարաբնակեցման հեռանկարային կառուցվածքի կանխատեսումը պետք է զուգակցվի տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների կանխատեսման հետ, քանի որ, ինչպես ցույց են տալիս տարբեր ժամանակահատվածներում և տարբեր համայնքներում բնակչության կենսագործունեության ցիկլերի՝ մեր կողմից արված վերլուծությունները ,նկատվում են մի շարք երևույթներ և միտումներ, որոնք զգալի ազդեցություն են թողնելու հանրապետության հեռանկարային տարաբնակեցման վրա: Դրանցից առավել կարևորներն են.

- մարդկանց տարածական շարժունակության աճը, տրանսպորտի դերի մեծացումը,
- մարդկանց բարեկեցության բարձրացումը և պահանջմունքների աճը,նոր պահանջմունքների առաջացումը,
- ազատ ժամանակի ավելացումը,մարդկանց ձգտումը՝ արդյունավետ և խնայողաբար օգտագործել ժամանակային ռեսուրսները,
- տարածության և ժամանակի մեջ գործունեության ինտենսիվության և տարողունակության աճը:

Հաշվի առնելով վերոհիշյալ միտումները և ՀՀ տարաբնակեցման համակարգի կառուցվածքային տեղաշարժերը վերջին տասը տարիների ընթացքում և օգտագործելով «Մարկովի շղթաների» մեթոդը՝ ստացել ենք տասը տարի հետո /2008թ./ ՀՀ տարաբնակեցման համակարգի կառուցվածքն ըստ հետևյալ կառուցվածքային բաղադրիչների.

Աղյուսակ 1

ՀՀ տարաբնակեցման համակարգի կառուցվածքային տեղաշարժերը
(1988-2008 թթ.)

Տարեթիվ	Ընդամենը /%/	Այդ թվում			
		Երևան	Մարզկենտրոններ	Այլ քաղաքներ	Գյուղ. բնակ.
1988	100	34.3	17.6	17.1	31.0
1998	100	33.0	17.7	16.2	33.1
2008	100	34.0	17.9	15.5	32.6

Դատողությունների ընթացքը հետևյալն էր. բնակչության տեղաբաշխման համամասնությունների փոփոխությունը դիտարկել որպես արդյունք տարբեր մակարդակների միջև բնակչության տեղափոխությունների: Այդ նպատակով կառուցվեցին երկու հիմնարար մատրիցաներ:

Ստացված արդյունքները (աղ.1) թույլ են տալիս կատարել մի շարք հետևություններ և խոսել հետևյալ միտումների մասին.

1. Երևանի տեսակարար կշիռը մի փոքր նվազում է (սակայն այստեղ անհրաժեշտ է մի քանի ճշգրտում անել. նախ, մոդելի ստուգման արդյունքներում ամենամեծ շեղումը տվեց այս միավորը: Մյուս կողմից, կա արտաքին կամ օբյեկտիվ ազդակ ևս. Երևանից տեղի ունեցող արտահոսքի մասին թերի պատկերացումը և, վերջապես, փաստացի ընթացող արտահոսքի մասշտաբները):
2. Աճում է մարզկենտրոնների տեսակարար կշիռը, որն ունի օբյեկտիվ բնույթ և դրական է տարաբնակեցման համակարգի կայունացման առումով:
3. Նվազում է հանրապետության այլ քաղաքներում ապրող բնակչության տեսակարար կշիռը (որն իր հիմքում ունի լուրջ հիմնավորում):
4. Մի պահ աճելուց հետո՝ շատ դանդաղ տեմպերով, սակայն նվազում է գյուղական բնակչության բաժինը (այս կետում ևս ստուգման ժամանակ մեծ շեղում էր ստացվել):

Այս նույն սկզբունքներով և մեթոդիկայով կատարվել են նաև երկրորդ ենթախնդրի լուծման հաշվարկները, որը վերաբերում է ՀՀ տարածաշրջանային տարաբնակեցման համակարգերում / ՏՏՀ / ընթացող գործընթացներին: Այս

դեպքում դիտարկվել է եռաստիճան կտրվածք՝ կենտրոն - այլ քաղաքներ - գյուղական բնակավայրեր: Յուրաքանչյուր ՏՏՀ-ի համար կազմվել են համապատասխան մատրիցաներ, որոնք նույնպես փորձարկվել են նախորդ տվյալների վրա:

Արդյունքները ներկայացվում են աղյուսակի տեսքով .

Աղյուսակ 2

ՀՀ ՏՏՀ-երի զարգացման կանխատեսման ցուցանիշները

(%)

ՏՏՀ	Հիերարխիկ աստիճան	Բնակչ.տեսակ. կշիռը /%/	Բնակչ.տեսակ. կշիռը /%/	Բնակչ.տեսակ. կշիռը /%/
		1988	1998	2008
Երևանի	*Երևան*	56.99	52.69	51.55
	Այլ քաղաք	18.68	19.78	19.51
	Գյուղ.բնակ	24.33	27.53	28.94
	Ընդամենը	100	100	100
Գավառի	*Գավառ*	11.98	12.41	12.37
	Այլ քաղաք	21.03	25.12	25.29
	Գյուղ.բնակ	66.99	62.47	62.34
	Ընդամենը	100	100	100
Վանաձորի	*Ծանաձոր*	44.21	43.87	42.77
	Այլ քաղաք	24.02	23.92	23.95
	Գյուղ.բնակ	31.77	32.21	33.28
	Ընդամենը	100	100	100
Գյումրիի	*Գյումրի*	62.01	58.61	57.08
	Այլ քաղաք	10.43	8.79	9.06
	Գյուղ.բնակ	27.56	32.60	33.26
	Ընդամենը	100	100	100
Կապանի	*Կապան*	29.92	28.69	28.40
	Այլ քաղաք	34.47	41.81	41.79
	Գյուղ.բնակ	35.61	29.50	29.81
	Ընդամենը	100	100	100

		Բնակչ.տեսակ. կշիռը /%/	Բնակչ.տեսակ. կշիռը /%/	Բնակչ.տեսակ. կշիռը /%/
Եղեգնաձորի	*Եղեգնաձոր*	16.21	16.98	17.40
	Այլ քաղաք	18.90	26.12	25.75
	Գյուղ.բնակ.	64.89	56.90	56.85
	Ընդամենը	100	100	100
Իջևանի	*Իջևան*	11.97	13.26	13.41
	Այլ քաղաք	33.25	27.03	26.72
	Գյուղ.բնակ.	54.78	59.71	59.87
	Ընդամենը	100	100	100

ՏՏՀ-երի կանխատեսման հաշվարկները թույլ են տալիս անել հետևյալ եզրակացությունները.

ա/ խոշոր և միակենտրոն կառուցվածք ունեցող ՏՏՀ-երում /Երևանի, Գյումրիի/ շարունակվելու են ապակենտրոնացման միտումները,կրճատվելու է ՏԿ-ների բաժինը, և դրա փոխարեն մեծանալու է գյուղական բնակավայրերի բնակչության թվաքանակը՝ ի հաշիվ գյուղական բնակչության ավելի բարձր բնական աճի և նախկին գյուղաբնակների մի մասի վերադարձի:Գյումրիի ՏՏՀ-ում փոքր- ինչ մեծանալու է այլ քաղաքների բնակչության բաժինը:

բ/ Վանաձորի և Գավառի ՏՏՀ-երում 1998-2008 թթ. սպասվում է ՏԿ-ի բնակչության բաժնի մի փոքր նվազում, թեև նախորդ՝ 1988-1998 թթ. տասնամյակում նկատվում էին աճի միտումներ:Միաժամանակ, երկու ՏՏՀ-երում շարունակվելու են այլ քաղաքների բնակչության բաժնի ավելացման և գյուղական բնակավայրերի բնակչության բաժնի նվազման միտումները:

գ/ Համեմատաբար ոչ մեծ ՏԿ-եր ունեցող ՏՏՀ-երում /Իջևանի և Եղեգնաձորի/ կանխատեսվող ժամանակահատվածում շարունակվելու է ավելանալ ՏԿ-երի բնակչության բաժինը, միևնույն ժամանակ կայունանում է գյուղական բնակավայրերի բաժինը տարաբնակեցման համակարգում:

դ/ Կապանի ՏՏՀ-ում մի փոքր նվազելու է ՏԿ-ի բաժինը. թեև. ընդհանուր առմամբ. նկատվելու է ՏՏՀ-ի կառուցվածքի որոշակի կայունացում:

ե/ Ի տարբերություն նախորդ տասնամյակի / 1988-1998թթ./ կանխատեսվող ժամանակահատվածում նկատվելու են տարաբնակեցման կառուցվածքային ոչ մեծ տեղաշարժեր և զարգացման որոշակի կայունացման միտումներ:Դա, մեր կարծիքով, կարելի է համադրել երկրի հնարավոր տնտեսական, ժողովրդագրական իրավիճակների սպասվող կայունացման հետ:

Գրականություն

1. Модели в географии (пер с англ), изд „Прогресс" М.1971 с.250-278.